



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔՆՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱԹ ՏԱՐԻԼ 1875

ԹԻԻ 4011

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Աստրոհոնգարիոյ կայսրն Մարտի 24ին ա-
ստուհն հասաւ 'ի վենետիկ, ուր 'ի կայա-
նն երկաթուղւոյն բազում սիրով ընդունուե-
աւ 'ի թագաւորէն իտալիոյ և 'ի գահաժա-
նդ իշխանէն: Կայսրն համբուրն երեսաց
կաղուրեց զթագաւորն և գահաժառանգ իշ-
խան ձեռք սեղմեց: Ընդունելութիւնն խիստ
պարկէր էր վենետիկ մէջ: ուր Ֆրանսիական
պետէի կայսեր բնակած պալատը բոլոր օրն
կապտեալ էր 'ի խուռն բազմութեան, որ
ժալի աղաղակներով իրենց օրտաղին ուրա-
ւութիւնը կը յայտնէին: Ուստի կայսրն որպէս
թագաւորն 'ի պաշտօնաւորն պալատին ելե-
լ իրենց շնորհակալիքը յայտնեցին այս ջեր-
տանդ ընդունելութեանը համար:

Քար Աստուած, որ այս երկու վեհապետաց
անկողնութիւնն ընդհանուր խաղաղութեան
անկողնանն նպաստաւոր լինէր:

Թէ լրագրաց ոմանց գրածներուն հաւատ
կայելու լինիմք, Տոն Կարողութիւնը զօրաբանակն
կալով կըտկարանայ, նորա գլխաւոր զօրա-
ւորներն Ալֆոնս Երկուստասներորդին կողմն
նշեցելով: Յայտնի է թէ յանցելու մի կարողու-
նէն Գալլիէրա զօրապետն որ Ալֆոնս թագա-
ւորն կառավարութիւնն ընդունելով Գալլիէրոյ
կողմն անցած է, յայտարարութիւն մի հրա-
տարակեց, որով կը հրաւիրէ՝ անշուշտ գիտու-
նամք Մարտի 24ին կառավարութեան, զկարո-
ւորն զօրապետներն և զինուորները՝ դառ-
աւ Ալֆոնս թագաւորն: որոյ աղաատաւեր
նշանակաւորաւ կառավարութիւնն գովե-
լ կը խոստանայ Նորին վեհափառութեան
պաշտօնէ՝ անշուշտարութիւն, պաշտօններ և յա-
ւաքիմութիւն: Կերեւի թէ այս խոստումնե-
ն քիչ կամ շատ արդիւնք ունեցած են: որոց
արդիւրք ոմանք մեծ կարեւորութիւն տալով

համադրային պատերազմին մատուոր վախճանը
կըզուշակեն: Անտարակոյ Սարանոյ համար
մեծ բարեբաղդութիւն պիտի լինի եթէ այս
զուշակութիւնն ստուգուի: Բայց Կարողութեան
կառավարութիւնն ըստ կարծեաց բազմաց, տա-
կալին շատ միջոցներ ունի երկար ժամանակ
զիմանալու 'ի գահադաւրոյն Սպանիոյ:

Յայտնի է թէ՝ կըսէ ժառանգ Քէմպէր-
պուրի օրագիրն, Անգղիոյ Աւետարանական ուխ-
տըն չյաջողեցաւ ուղղակի մատուցանել օգու-
թութեանն ուղերձ մի, զոր յատուկ պատգա-
մաւորութեամբ մի յուղարկած էր 'ի Կ. Պոլսի:
Այս բարեպաշտական յիշատի գլխաւոր ան-
դամքն, կը յաւերտ յիշեալ լրագիրն, մեծ ժո-
ղով մի (միթին) բրին 'ի Լոնտոն և բարձրաս-
տիճան երեւելի անձանց՝ այսինքն Ռասել Կոմիտն
Ուէսթմինսթէր Գլոսթըր, Սթրէթֆորտ Լորտին և
այլոց նամակներն կարգացուցան նոյն ժողո-
ւոյն մէջ: Յետ այնորիկ որոշուեցաւ ամենայն
հաստատմամբ կամք յառաջ տանել զգործն
որ արդէն սկսեալ է, և Գլոսթըրպուրի արք-
եպիսկոպոսին առաջարկութիւնն՝ համահաճու-
թեամբ ամենուն ընդունուեցաւ: որ է արտա-
քին գործոց պաշտօնայ լրատ Տէրպիլին յանձնել
զուղերձն զոր Աւետարանական յիշատի պատ-
գամաւորութիւնն չկրցաւ մատուցանել Սուլթա-
նին, աղաչելով զիշեալ լրատն որ յուղարկէ
զնոյն ուղերձն անգղիացի դեսպանին Կ. Պոլսոյ,
պատուիրելով նմա մատուցանել զայն 'ի ձեռս
Նորին կայսերական վեհափառութեան:

Ինչպէս կըտեսնուի, այս խնդիրն պաշտօնա-
կան ճամբու մէջ մտաւ այժմ և կը յուսացուի
թէ սըր Հէնրի Իլիօթ կը յաջողի նայն իսկ Սուլ-
թանին ձեռքը յանձնել զիշեալ ուղերձն: ո-
րով Անգղիոյ Աւետարանական յիշատի փափաքն
'ի գործ կը դուրսի: Բայց այս փափաքն գործա-
դրութիւնն ինչ արդիւնք պիտի ունենայ ար-
դեօք՝ ժամանակն պիտի յայտնէ մեզ:

Յանցելու մի հոռի մէջ առավարական հաց-
կերպի մի տրուելով 'ի պատիւ Կարիպալտին,
այս ծերունի զօրապետը խիստ պարկեշտ և խո-
հական առնանախօսութիւն մի բրաւ: յորմէ հե-
տեալ հատուածներն քաղելով, արժան կը հա-
մարիմք մեր ընթերցողաց աչաց ներքե գնել:

«Կրիպալտը» բարեկամական և եղբայրական
խրատ մի տալ ձեզ, որովհետեւ կը բարեհաճիք
նկատել զիս իբրեւ եղբայր: Գործաւորք, աշխա-
տեցէք գործաւոր ընել ձեր գաւազները: Եթէ
երկաթագործ էք, հող տարէք երկաթագործ
ընել ձեր գաւազներն: Եթէ հիւան (տիրակէր)
էք, թող ձեր որդիքն ևս հիւան լինին: Ես ըզ-
բորը աշխարհ պտտեցայ գրեթէ մէկ ծայրէն
'ի միւս ծայրն, և տեսայ միշտ որ հարիւր պան-
դուխաններն իննսուներ իննք գործաւոր էին և
իրենց ձեռքն ունէին պարկեշտ և շահաւոր ար-
հեստ մի: Դարձեալ տեսայ որ գրագէտն եր-
բմն ձեռք կըրկնցընէր և օգնութիւն կը լսեղ-
րէր գործաւորէն: Գաղղիոյ թագաւորքն 'ի
հաւան արհեստ մի սովորեցնել կուտային իրենց
գաւազաց: Արդ կը յորդորեմ՝ զձեզ՝ այն թա-
գաւորաց օրինակին հետեւիլ և լաւ արհեստ մի
սովորեցնել ձեր որդւոցը:

«Կեսն» թէ պէտք չէ որ ժողովուրդը քաղա-
քականութեամբ զբաղի: Այս կարծիքը սխալ
է: Ընդհակառակն պէտք է որ ուշադրութիւն
մատուցանէ քաղաքականութեան հանդարտ
սրտիւ: Ս'ի կարծեք թէ ես յեղափոխու-
թենէ հեռացած եմ: Ընդհակառակն յեղափո-
խական եմ՝ միշտ որպէս էի 1849ին: Բայց գիտ-
նալու էք թէ յայնժամ միայն յեղափոխական
եմ, յորժամ հարկ կը լինի զչարն կործանել բար-
ւոյն տեղի տալու համար: Այլև պարտիք գի-
տնել թէ այս յեղափոխութիւնն բռնի միջոցնե-
րով չյառաջադիմէր: վասնզի բարոյական գա-
ղափարի խնդիր մըն է, որ պարտի յաղթական
հանգիստնալ առանց բռնութեանց:

Հաւատացէք թէ ես ամենեւին չար ինչ չեմ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԿԱՐԵՂ

Ի լիակատար կենսագրութեան օրագրան Հայրապետի
Ներսիսի Ե. վեհափառ, եւ ազգասիր կարողի-
կոսի ամենայն Հայոց:

(Շարունակութիւն: Տես քիւ 4010)

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Այս կենսական խնդրոյ, որ Ներսէս վարդա-
պետի համար կենաց և մահու մէջ ընտրութեան
խնդիր էր, ինչ կասկած կայ, որ Ներսէս վար-
դապետն՝ միայն անձնապահ լինելոյ աղաղա-
ւորամ՝ պիտի մտածէր մէկ ելից ճանապարհ:
Ինչ զայն ապահով փախստեան ծակ չէր յա-
ղարկէր միտ բերել, որ լիմիաճնի միաբաննե-
ն մէկ քանիսն խեղճերն ջրէ, իւր համախոհ
ունէ, և նոցա հետ միասին գիմէ առ Դանիէլ:
այց զուցէ թէ նորա խորախորհուրդ սրտի ան-
մատաղօտելի միջին խորշերի անկիւնումն կայր
անխնայեալ գաղափի տակն մէկ յուսոյ կայմ,
որ նորան ի ներքուստ կաղզուրում էր և քաջա-
լորում էր կարծել և տեսլ, Պետերբուրգէն
մինչ ի Տիֆլիս այնքան հեռի չէ, որքան՝ Տիֆլի-
սէն մինչ յԵլմիսին:

Յովսէփայ կեանքն այնքան անբիծ, անարատ
և անըստգիւտ չէին որքան նորա արտաքին ծի-
րանքն: Դեռ հինգ տարի չէր անցել այնու-

հետեւ, որ ըստ ոմանց զբարոյաւորել էր Յովսէփ,
և ըստ ոմանց կշտամբուել Տիֆլիսի մատուցելը,
և այն մարդիկ՝ որ հեղինակ էին դարանակա-
լութեան, աւելի բարձրաճայն էին աղաղակում
և ընդգէճ Յովսէփայ գրգռում ամբոյնի սիրտն:
Արդէն ի քանի ամաց հետէ մեռել էր Հերակլ
արքայն, որ ընդ իւր տարաւ ի գերեզման եր-
կու կարեւրէր խոց, որ ստացել էր Յովսէփէն՝ ա-
ռանց նորա վերք ինչ ի սիրտ արքային դնել
կամելոյ: մին այս էր՝ որ արդէն տեսանք, իսկ
միւսն մէկ հին անցք, որոյ նախքն թաց, զու-
ղ ընթաց և հետեւորդ պարագաներն միայն Ներ-
սիսի նման օրամիտ, հեռատես և չրջանկատ
անձն կարող էր ի միտ առնուլ, կրեւ և մակա-
բերաբար գուշակել: Այս Պրինցի անցքն էր:
Յընթացս պատմութեան տեսանք՝ որ 1725
թուէն սկսած Սիւնեաց տանէն Գաւիթ բէգ
հայազգի իշխանն և նորա ընկերակիցք երբեմն
երբեմն ցոյց էին տալիս աշխարհին որ Հայազգն
գեւե իսպառ մեռած չէ: այլ իւր նախնեաց ա-
րիւթութիւնն և ազգասիրութիւնն թէ միտք բե-
րէ, կարող է գործով ևս հաստատել իւր կեն-
դանութիւնն:

Երբ այս ազգային առկայծեալ պատրոյդն ևս
չիշտ, Դաւիթ բէգի զօրականներն ցրուեցան,
և բազումք մտան Նաղիւր Շահի զօրաց մէջ՝ որ-
պէս էր և կամարական կարապետ աղայն, և
գնացին մինչև Աղուանտան և Ղանաշար և
Հնդկաստան: Սոցանէ մին (որոյ անունն գրած
ունէի, բայց այլ թղթոցս հետ յախշտակու-

թեան մատուցաւ) Հնդկաստանի Հայոց մէջ
շատ յառաջադէմ եղեւ, ոչ միայն առեւտրական
վաճառաշուքութեամբ ճոխանալով, այլև Անգ-
ղիացւոց և Հոլանտացւոց՝ բնիկ Հնդկաց դէմ՝
մաքառմանց մարտական հանգիսից մէջ ճախա-
րակելով, ևս առաւել ազգասիրական հոգւով
զօրանալով, եղև դառնալ յայն երկիր, ուր իւր
պատանեկութեան հասակի մէջ հոտոտել էր
վառօգն, և ծանօթացել էր թշնամեաց արձնեաց
գնտակաց հետ, և թէ հարկն պահանջէ՝ մեռա-
նի իւր հայրենեաց Հայաստանի փրկութեան հա-
մար՝ զէն ի ձեռին:

Կցորդ կենաց գոլով Շամիր խանի (Շահ Ամիր
խանի) ճոխ և բազմափորձ հայազգի հայրենա-
սէր իշխանի, և նորա ազգասիրական խրախու-
սանք քաջալերեալ, իւր ուղղական նախա-
կութիւններով բազում եւրոպական թագաւո-
րութեանց ծանօթացաւ, և ի նոցանէ ստացաւ
Պրինց պատուանունն, որ այնքան սովորական
եղև և հասարակեցաւ հայոց չրթանց մէջ, որ
այն մնաց իսկ նորա անունն, հայրանունն և
ժականունն մառացվեցաւ: Այս Պրինցն, որ կը-
նշանակէ իշխան, կամ թագաւորացն, ունէր
երկու որդի՝ Արշակ և Վաղարշակ անուն: Հնդ-
կաստանի հայազգի ճոխ վաճառականաց բազ-
մախիք և բազմաստորադիր վկայականօք և
յետկարօք ուխտի օգնութեան, և ոմանց եւրո-
պական թագաւորութեանց՝ որք կըցանկային
Ալեքեան Հնդկաց վաճառաշահէն, որոյ գլխա-
ւոր տուրեաւորին կը լինէր ձեռամբ հայազգի-

կամիր պապութեան և կաթողիկէ եկեղեցւոյն . քանզի պապութիւնն՝ գոնէ իսկզբան , ոչսակաւ ծառայութիւններ մատուց իտալիոյ . նա պահպանեց զամբարաններ , ձեռագիրներ և յիշատակներ , որք առանց պապութեան , կորուսեալ պիտի լինէին մեզ համար” :

Հէլլատայի լուրերն տխուր են . գրգռութիւնն երթալով կըզօրանայ՝ կառավարութեան ընդդիմամարտ կուսակցութեան մէջ . որ ապօրինաւոր և սահմանադրութեան հակառակ կըհամարի տէրութեան այժմեան ընթացքը : Այս ընթացքին դէմ բողոքեցին Աթենքի օրագիրներէն 18 թերթք , իսկ կառավարութիւնն բանի տեղ չդնելով այս բողոքներն՝ ինչպէս նաև ժողովրդեան գրգռութիւնն , կըշարունակէ իւր ընթացքն՝ հոգ տանելով հաստատուն պահել զբարեկարգութիւնն և անգործութիւնը :

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ Թար Գիթի-Պոֆոր՝ կոչուած լրագրոյն մէջ յետագայ յօդուածը կընթեռնուի .

«(Մայրաքաղաքիս) Լըվէնի ձիւղ անդղիական լրագիրն կրէ թէ՛ ժամանակէ մը ի վեր Պիրմանստանի մէջ հաստատեալ Հայ գաղթականաց ազգեցութեամբն , Պիրմանցի բազմաթիւ ժողովուրդ փափաքեք են Արեւելեան ուղղափառ Հայոց քրիստոնէական կրօնն ընդունել : Այս գործոյն համար՝ բաւական ժամանակ կայ , ինչդիր մի յուղարկուերէ Էջմիածնի Ս. կաթողիկոսին . բայց ինչդիրն առանց պատասխանի մնալով , Պիրմանցիք յատուկ երեսփոխան մի յուղարկեք են Եջմիածին , պաշտօն ունենալով , ինչպէս որ կըսուի , նաև Կ. Պօլսոյ պատրիարքարանի հետ բանախօսութիւններ ընել ի մասին այս դարձին : Յիշեալ գործակատար երեսփոխանն՝ որ ազգաւ Հայ է և կըկոչուի պարոն Մինաս Խաչատրեան , ի քանի մի առուրջ հետէ եհաս ի մայրաքաղաք մեր” :

Այս յօդուածն ինչպէս իմացանք ի բերանոյ նոյն իսկ յարգոյ պարոն Մինասի Խաչատրեան , լի է սխալմանք ըստ մեծի մասին . մանաւանդ Պիրմանցի ժողովրդեան՝ Հայոց գաղութիւնն ընդունելու համար գրուածներն բոլորովն անհիմն և անտեղի են :

Արարապայ՝ Փետրվար ամսագրոյն մէջ հետեւեալ յօդուածն կընթեռնուի .

Եաց , նոցա միջնորդութեամբ օգուտ քաղել , վաւերական հաւատեօք կաղութեալ , սկսաւ Եւրոպայի երեւելի քաղաքաց մէջ չընդհանրել , և շատ թագաւորներէ ստացաւ դաշնաց դիր , որ ընդունին նորա վեհութիւնն : Այս օրինակ թղթեր ունեւոր ի ձեռն եկաւ Պրինցի ի Ս. Պ. բուրգ . և որովհետեւ չունէր իմիք կարօտութիւն , մեծարանօք և պատուով հիւրընկալութիւն գտաւ հայասէր ինքնակալ կայսրուհիէն Եկատարինայ , և յարգութեամբ ճանապարհ ստացաւ դէպ յԱստրախան , որ անտի ուղևորի ի Հայաստան՝ անցանելով ընդ լեւինան կովկասու և ընդ վիրս : Աստրախան քաղաքի մէջ , որոյ հայազգի բնակիչք ըստ մեծի մասին էին դաւաւորներ ցրուեալ զօրացն Դաւիթ բէգի , և Աւան խանի և Աւան իւղբաշուոյ , մեծ ընդունելութիւն գտան թէ՛ քաջալան Պրինցի և թէ՛ նորա երկու որդիք Արշակ և Վաղարշակ զուարթածաղիկ և քաջակորով պատանիք , որք Անդղիական զինուորական նշանազգեստութիւններն և իւրեանց ուրախութիւն կըպատճառէին համազգեստ :

Իսկ երբեմն յաւուրս մեծամեծ տօնից՝ մինչ կըհաղնէին իւրեանց ընդի հայազանց իսկական զինուորական տարազն , և կուգային յեկեղեցի , տակաւիայլ փետրազարդ սաղաւորաններն զլիւններին , երկաթակուռ զրահք հաղնեքին , ուսէն՝ կապարճ նետից և տղեզն , և մէջքէն երկաթայրի սուսեր ի կախ , նման կլինէին այն դիւցազանց , որովք լի է ազգային պատմութիւնն մեր :

Երբստամէկն ակնաստեօք , թէ՛ կասէր Պրինց՝ որ եթէ այս զէնքն չլինէին կիլիկեցւոյ ժամանակն ,

Գերա . Առաջնորդն Հայոց վիճակին Արցախու Տ. Սարգիս սրբազան Արքեպիսկոպոս՝ ինչպէս որ գրաւոր խոստացած և անցեալ տարի գործնականը ևս կատարած էր , նկատելով ի ներկայ ճեմարանի բաղմակարօտ գրութիւնը և պէտքը՝ այս տարի կանխեց յանուն ճեմարանի տարեկան Գ. հաշար ուսման նպատք ի վիճակային արգեանց յղել , որոյ համար մեր Հնորձակալութիւնը հրապարակաւ կըմատուցանեմք Նորին Գերապատուութեան :

Մոսկուա , ի 7 Մարտի 1875

Յարգոյ խմբագիր «Արշալուս» ,

Յերեկեան օրն ընկալայ պատուական «Արշալուս» 1008 թիւն և ընթերցայ նորա մէջ պատուելի Տէօքմէճեան չօր նամակը , որով Նորին Արժանապատուութիւնն յայտնէ իւր ցանկութիւնն իմանալով թէ՛ արգեօք ինչո՞ւ համար Մերայ Մարդասիրտի կենսագրութեանը և Պերպերեան Աւետիսի յօրինած Հայոց Պատմութեանը միջէն զանց է եղած եփերմ՝ կաթողիկոսին առ Նիկողայոս Ռուսաց կայսր գրած մէկ աղերսագիրը , որով յիշեալ կաթողիկոսը իւր հրաժարականը տալով կընկերէ միանգամայն՝ որ Ներսէս սրբազանը իրեն յաջորդէ . «այլ միայն եփերմ սրբազանը հրաժարեցաւ և նորա յաջորդեց Յովնանէս կարբեցին ըսելով չոր ու ցամաք անցեր են” . կրսէ :

Թողլով Պ. Պերպերեանին պատասխանել և ցուցանել զիւր իրաւացի պատճառքը լուեկայն անցանելու եփերմ՝ կաթողիկոսի ցանկութիւնը իւր կենդանութեամբ (ի 1828 ամի) Ներսիսին յանձնելու զկաթողիկոսական Աթոռը , և առ կայսրն Ռուսաց գրած աղերսագիրը , փութամ յիմ՝ կողմանէ հաւատարմութեան զՏէօքմէճեան Հայրէ թէ՛ իմ ծնոցս իւր . «Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի” վերնագրով մատենին մէջ , որ այժմ գտանի տպագրական մամուլի տակ , ոչ միայն կըյիշէ զայդ «նշանաւոր դէպքը” , և ի մէջ կըբերէ եփերմ՝ կաթողիկոսին առ Նիկողայոս կայսրն , ի 1858 Նոյեմբերի 1828 ամի , գրած աղերսագիրը , այլև կընդօրինակէ նաև նոյն կաթողիկոսի մէկ այլ գրութիւնն ևս առ Պատկելի Ելիսանն , ի 20 Դեկտեմբերի 1828 ամի , որ ոչ պակաս ուշագրութեան արժանի պատմական տեղեկութիւն է , և գուցէ Տէօքմէճեան չօր բողոքովն անցայտ : Այս գրութեան մէջ եփերմ՝ կաթողիկոսն ի վերջ ամենայն գրէ այսպէս . «վասնորոյ ամենախոնարհաբար խնդրեմ և ի Զերդ Պայծառափայլութենէ գթալով պաբազմանեայ ծերունիս՝ զինամողական միջնորդութիւն ձեր միաւորել աղերսարկութեան իմից՝ մատուցելոյ Նորին կայսերական Մեծութեան և արժանի արարցես զիս մարդարէական երանութեանն ոչ զկնի վախճանի իմից , այլ այժմ՝

նախն , այլ մտած լինէր՝ Հայոց մէջ հրազենն , Հայերն անյաղթ կլինէին և ցարդ պահած կլինէին իւրեանց անձնիշխանութիւնն : Ես՝ կասէ եղել է , այս զէնքն պահումեմ , որովհետեւ իմ նախնեաց պապերէն ժառանգութեամբ են մընացել , և պիտի իմ զօրացս ցոյց տամ՝ թէ Տիգրոսն , Տրդատ , Վարդան , Վահան , Լէոն կամ Թորոս միայն այս զէնքերն են ունեցել , և միշտ յաղթել են . բայց Դաւիթ բէգ ցոյց տուեց որ հայերուն աւելի օգտաւէտ է հրազենն :

Ետտ երիտասարդք՝ որ Պարսկաստանի ամեն կողմերէն կըհաւաքուէին յԱստրախան , որովհետեւ ծագեալ էր անդ Հայոց վաճառաշահն , տեսանելով այս քաջարի հայերուն , թողնում էին իւրեանց առեւտուրն և մտանում էին նորա զինուորութիւն : Պրինցի գալոյ ժամանակն՝ Յովսէփ չկայր յԱստրախան : Ինչպէս յետոյ երեւցաւ , միայն ազգասիրութիւն , հայրենասիրութիւն , գանձ , քաջութիւն , բաւական չեն . ազգի կանգնելոյ համար հարկաւոր է չընհայեցութիւն և միաբանութիւն : Նախ և առաջ Եւսիւր խանն՝ որ լաւ կըճանաչէր Յովսէփի փառասիրութիւնն , պիտի զգուշանայր և զգուշացնէր Պրինցին , որ նա այլոց համար թող լինէր առաջին անձն Հայոց մէջ , այլ Յովսէփայ համար լինէր անդրանիկ յարգիս հայրութեան նորա , և առաջին ոչխար հովուութեան նորա . բայց ոչ նա մտածեց և զգուշացոյց Պրինցին , և ոչ Պրինց՝ որ մուսայել էր թէ՛ որքան մարդասիրութիւն էր գտել Դաւիթ բէգ . Հայաստանի վանքերի վանահայրերէն , և մանաւանդ Դանձասարայ

ի կենդանութեան իմում . զի եթէ կայրն բարեհաճեալ չըլլէ և գրամատիւք փութացայ , առ իս զՆորին բարձր Սրբազնութիւնն (ի ինքնին ձեռամբ իմով ամենայն յօժարութեամբ ունիմ՝ ըստ սովորութեան եկեղեցւոյն մերոյ) ծանել զՆերսէս արքեպիսկոպոսն ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց , և յանձնել զամենայն պաշտօն և զանտեսութիւն կաթողիկոսութեան իմից նմա՝ զմնացեալ կեանս իմ՝ միամտութեամբ պարապեցուցից յաղօթս և ի գետնամած երկրպագութիւնս առաջի սրբացեալ տաճարիս առ ամենազօր թագաւորն տիեզերաց զի անպարտելի արասցէ զսուրբ կայսերութիւն Նիկողայ Պաւլովիչ կայսերն համայն Ռուսաց կթագաւորն մեր Հայոց , ընդ նմին և Զերդ Պայծառափայլութեան , և համայն կուսակապ զօրապետաց և զօրաց Նորին Մեծութեան” : (Տէօքմէճեան ի Պատմ . կաթ . Էջմիածն . գլ . Ժգ .) :

Բայց «Արշալուս» մէջ տպագրուած «Վերնագր» վերնագրով փոքրիկ յօդուածին հետ առ որ ակնարկէ Տէօքմէճեան Հայրն , և որ այլ ինչ է բայց եթէ ոչ մասնաւոր կենսագրութիւն իմ՝ ծնողիս , ոչ եփերմ՝ կաթողիկոսի ցանկութիւնն , ոչ առ Նիկողայոս կայսրն գրած աղերսագիրն , և ոչ ի վերոյ յիշեալ գրութիւնն առ Պատկելի Ելիսանն , ոչինչ յարաբերութիւն չունին և ունենալ ևս կարող չեն . ուստի և կարող էին յիշատակելու անոր մէջ :

Այսպէս , լրուցանելով մասամբ իւր քարտէս Տէօքմէճեան չօր հետաքրքրութիւնը , ես կըխնդրեմ ի նմանէ համբերել փոքր ինչ ևս պատկերահաւան «Պատմութեան կաթողիկոսաց Էջմիածնի” , որոյ մէջ անշուշտ կըգտանէ նա իւր ցանկացած տեղեկութիւնք , և կըտեսնէ իւր այժմ առ Պատկելեան ծերունին ուղղափառ հրաւրանաց աւելորդութիւնը :

Ջարմայր Մ. Մսերեան :

Մեծարգոյ պարոն Մինաս Դր. Տ. Խաչատրեան որ յանցեալմի Պիրմանստանէն գալով ի սուրբ Էջմիածին գնաց յայցելութիւն վեհա . սրբազան գոյն կաթողիկոսին ամենայն Հայոց , իւր ճանապարհորդութիւնն յաջողութեամբ կատարելով Մարտի 29ին շարժւաւ առաւօտուն աւստրիական շոգենաւով Կ. Պօլսէն գալով վերագարձաւ ի քաղաք , և նոյն օրն երեկոյն միևնոյն շոգենաւով շարունակեց զուղևորութիւն իւր Պիրմանստանի Մանթլէյ մայրաքաղաքն երթալու Աղէքսանդրիոյ ճանապարհաւ :

Պարոն Մինաս Դր. Տ. Խաչատրեան , որ Պիրմանի օգոստոսափառ վեհապետին պալատական

(1) Ներսէս արքեպիսկոպոսն գտանէր յայնմ Վրիշնէս քաղաքի Բեսարաբիոյ :

կաթողիկոսէն . և երկար ժամանակ Հնդկաստանի հայազգի վաճառականաց մէջ , և եւրոպիոյ թագաւորութեանց դռներումն՝ այլ գաղափարներ էր ստացել , և այլ ուղղութիւն էր սեփականել ինքեան , միտք բերեց թէ իւր շինքն տանձի կող չէ , որ եթէ Յովսէփայ առ զլուին փոքր ինչ խոնարհեցնէ՝ միջաբեկ ետատակի , և ոչ Յովսէփ՝ որ յաջողութեան հաբած լինելով , երբ լսեց Պրինցի լուրն , զարդացաւ , թէ ինչպէս է համարձակել այն հայազգին արտաքոյ իւր տնօրէնութեան ազգասէր անունստանալ , ազգի մէջ երեւելի հանդիսանալ , և Եւրոպիոյ թագաւորաց ծանօթանալ , կարողացաւ ասել , որ ոչ է մեզ հակառակ ի մեր կողմէ , թէ նա ոչխարամիտ աշխարհական է , եւ Յովսէփ օրինակէն խրատուած հովիւ լինելն ցոյց տամ , երթամ ինքս գտնեմ իմ մտրեալ ոչխարն :

Յայտնելեցաւ որ ոչ Պրինցն էր հեռաւոր մարդ , և ոչ Յովսէփ : Այս երկուսի սրտից մէջ ևս թագաւորեալ ակտն էր փառասիրութիւն : Պրինց արգէն այնպէս ապահովեալ էր համարում իւր ապագայ վիճակն , որ կարծում էր թէ մէկ ոտքն անշուշտ հաստատած է այն ճանապարհով վերայ՝ որ անխոտոր կրտսնէր դէպ ի Հայաստանի աթոռն : Հինգ Մեկեք ամենայն րոպէ կարէին հանել երեսուն քառասուն հազար հոգիներէ զօրք : Նա ունէր այնքան ճոխութիւն , որ կարէր նոցա ուճիկն առատապէս բաշխել ինչ այլևս արգելաւիթ կայր , որ Պրինց ակաբանայր կանգնել Սիւնեաց և Արցախայ անմատոյց լեռանց մէջ Հայոց ի չորս հարիւր ամաց

ներէն մին է և շնորհ գտած է Նորին կայսերական վեհապետութեան առջև, ի Ս. Էջմիածին ըրած իւր ճանապարհորդութեան ստորագրութիւնը ընելով՝ հրատարակել տուած է՝ Մասիս լրագրոյն Մարտի 25 թուոյն մէջ. յորմէ քաղերալ յառաջ կը բերեմք աստ զնոյն ստորագրութիւնն ի տեղեկութիւն մեր ընթերցողաց :

Կ. Պոլիս, 14 Մարտի 1875 :

Յարգոյ պարոն ,

Մասիս լրագրիդ թերթի մէջ բարի համարելով կը ընդգրկեմ ի լոյս ընծայել սոյն ճանապարհորդութիւնս ի տեղեկութիւն հեռաբնակ հայազգաց մերոյ :

Երեւանէն դէպ յարեմուտ մինչ հարաւ շեղելով Արարատեան գաւառի մէջ վաղարշապատ քաղաքը կայ հին վաղարշապատի տեղ :

Քաղաքին հարաւային կողմն է Ս. Էջմիածնի վանքն , քառակուսի կարգով շինուած . որոյ արեւելեան կողմն է վանուոյ ուսումնարանն և տպարանն ի վերնայարկ . ներքեւ յարկն է միաբանից խցեր և սղատուն . հարաւային կողմն է շտեմարանն և դրատունն ի վերնայարկն . ներքեւ յարկն է սեղանատունն և մասնաւոր շտեմարաններ : Արեւմտեան կողմն է վեհարանն և գանձատունն և քանի մի միաբանից խցեր . դէպի հիւսիսային կողմն է բոլոր միաբանից խցեր միաշար և ներքնայարկ . վանուոյ ճիշտ մէջ տեղն է Ս. Էջմիածնի եկեղեցին Լուսաւորչէն շինուած , խաչածէն չորս սիւնի վերայ , և մէջ տեղը բարձր գմբէթ . եկեղեցին երեք խորան ունի պատարագամատոյց . երկու սեղան ևս եկեղեցւոյն խաչածէն հիւսիսային և հարաւային թեւերուն մէջ . հարաւային կողմի սեղանն Լուսաւորչի սեղան կանուանի , ուր կը դրվի Ս. Մեծօրնի յատուկ սանդ . հիւսիսային սեղանն կանուանի Ս. Ստեփաննոսի սեղան , ուր կը ընկնի եպիսկոպոսաց ձեռնադրութիւն :

Եկեղեցւոյն կեդրոնն է , ի վանք սեղան յատուկ գմբէթով , չորս սեւան վերայ կանգնած . այս տեղն իջած է Քրիստոս Տէրն մեր Տրդատայ հաւատալէն յետքն , զոր տեսաւ Ս. Գրիգոր Լուսաւորչին մեր իւր տեսելէն մէջ , և այս եկեղեցւոյն ձեւն ցոյց տուաւ նոյն ինքն Քրիստոս , զոր ճիշդ նկարածին համեմատ կառուց Ս. Տրդատէս Ս. Լուսաւորչին յայտնելէն անմիջապէս յետքն : Եկեղեցւոյն աւագ խորանին և Լուսաւորչին և Ս. Ստեփաննոսի սեղաններուն վերայ երեք գմբէթներ շինել տուած է Եղիազար կաթողիկոսն :

հետէ կործանեալ աթոռն : Բայց Յովսէփ՝ այդ աթոռն կամենում էր տեսանել հաստատեալ ոչ իսկ և իսկ ի Հայաստան , ուր Ղուկասն է կաթողիկոս , Ներսէսն է թագաւոր , իսկ ինքն և ոչ ժամակոչ Գրիգորի չափ ունի անդ իշխանութիւն . այլ նախ ի Գրիգորիպօլիս , ուր իւր թագաւորութիւնն էր , և այն ընդ իշխանութեամբ իւրոյ եղբորորդւոյ , զոր ինքն ընտրեալ էր յայն աթոռ , որ ինքն լինի թագաւորահայր , և երբ փոխանայ Հայոց Հայրապետութիւնն , ի Գրիգորիպօլիս փոխադրէ ի վաղարշապատ . վասնորոյ և Գրիգորիպօլիս քաղաքին տուել էր կնիք ինքնահայր , և անունն դրել էր կնիք թագաւորաց Հայոց . յորում կային և Մասիս հանդերձ տապանաւ , և աղանձին Նոյեան , և եօթնադարիս վիշապն Տիգրանեան , և դաստառակն Արքարեան , և Արծիւն Արշակունեան , և Գառն Տրդատեան , և Առիւծն Լէոնեան : Վասնորոյ երբ տեսաւ Պրինցի և իւր որդւոց դրօշակի տակ , Հայ զօրականք , զորս ինքն չէր խմբել , նորա աղգասէր սրտի մէջ վառուեցաւ անձնասէր նախանձն , և փոխանակ խաչիւ և խաչվառաւ ընդ առաջ ելանելոյ այն սակաւաւոր զօրաց , և նոցա դրօշն օրհնելոյ , անձնատուր եղև յաշաղանաց : Յաջադէլոյ և թշնամութեան դուռն բանալոյ շարժառիթք ևս պակաս չէին : Պրինց կամենում էր որ Յովսէփ նորան այնպէս պատիւ տայ՝ որպէս վայել է իւր համարգի օրինաւոր թաղաւորի : Յովսէփ կամենում էր որ Պրինց նորամէն այնպէս կախումն ունենայ , որպէս թէ դեռ նա պիտի նորան յիշէ՛ գոյացոյ ցանկ , և նորա

եկեղեցւոյն դաւթի գրանջաւնն չորս սեւան վերայ 2 յարկով և բարձր գմբէթով շինուած է զանգակատուն , փիլիպոս կաթողիկոսէն յաւանտար և Գառն կաթողիկոսի օրով ընցած :

Վանքի արեւելեան խորաններուն յետեւ եկեղեցւոյն երեք կարգի բաժանեալ շինած է նոր թանգարան ներկայիս վեհա. Գեորգ Դ. կաթողիկոսն , ուր կը պահուին կարգադրեալ եկեղեցւոյն բոլոր ոսկեղէն և արծաթեղէն և ականակուռ անթեղէններ և այլ զանազան հնութիւններ , և մասունք ամենայն սրբոց , սուրբ խաչափայտ . Ս. Գեղարք , տախտակ Նոյեան տապանի , թուով և թուահամարով սոմարի մէջ արձանագրուած , որոց մեծ մասն Հնդկաբնակ Հայոց յիշատակներ են , իւրեանց անուններն յիշատակած : Այս թանգարանի առաջին մասին բանալիներն յանձնուած են վանուոց աւագ լուսարար եպիսկոպոսին օր ըստ օրէ պատրաստութեանց համար , որք այս մասին մէջ ամփոփուած են : Իսկ միւս երկու մասի բանալիներն մէկն վեհափառ կաթողիկոսին մօտն է միշտ , մէկն լուսարար եպիսկոպոսին և միւս ևս տրուած Սինոդոսի . և հարկ եղած ժամանակ , այսինքն երբ արժանաւոր այցելուք գալոց լինեն , և կամ մեծ Զատիկներու՝ կը բացուին այն երեք բանալիներու ներկայութեամբ . այսպիսի օրերս վեհափառն կողմանէ կը ներկայանայ իւր գաւաղանակիրն : Այս թանգարանին հնութիւններն անկորուստ պահելու ջերմ փափաքանօք կը պահպանէ վեհափառ կաթողիկոսն ի պարծանս Հայոց ազգի :

Վանքի Արեւելեան կողմն նոր ճեմարանը շինուած է ներկայիս վեհափառ կաթողիկոսէն . ուր ճեմարանի ճակատին վէմն գրուած է « Հիմնարկեաց Գեորգ Դ. կաթողիկոս ամենայն Հայոց » :

Վանքի հարաւային կողմն է հանդուցեալ Ներսէս կաթողիկոսի շինել տուած լիճք . դուրս վարը ի հարաւ ընդարձակ անտառն ձգած է :

Որոյ գորակից մին անտառ ևս Մատթէոս կաթողիկոսն ձգած է ի պէտս վանուոց :

Ներկայիս վեհա. Գեորգ Դ. կաթողիկոսն նորանց կիցն մին պարտեզ ևս ձգած է . և մին ևս վանքի հիւսիսային կողմն հասարակաց պարտեզ մի նորատունն , որ է վաճառականոցի հրապարակն : Վանքի Արեւելեան կողմն է տպարանն և գրականութեան և այլ պիտոյք տպարանի , ուր բազում փափաքանօք հիմաւորց գրեանքն վեհափառն կը տպագրէ լոյս ընծայել հետզհետէ ի պէտս Հայոց ազգի մերոյ , զոր մինչ ցարգկային նոյն գրեանք անշարժ վանքի մէջ :

հրամանաւ շարժի , նորա ակնարկութեամբ ուղղէ իւր ընթացքն՝ որ եթէ արդարեւ յաջողէ նա թագաւորել , որով իւր եղբորորդւոյ առաջն պիտի կտրէր , այնպէս գաւառնի՝ որպէս թէ շնորհօք Յովսէփայ է գտել այն ամենը , և իւր երկուց որդւոց համար առնու ի հարսնութիւն նորա ցեղէն , որ վերջապէս Արղւութեանց տուն մանի այն թագաւորութիւնն . և եթէ երբէք նա տէր դառնայ բովանդակ Հայաստանի , Յովսէփայ առջև լինի ոչ այլ ինչ բայց միտն որպէս վաստակ հպատակ իշխան , որ ինքն՝ Հռոմայ պապի նման երբ կամենայ , նորա գլխէն , կամ նորա որդւոց գլխէն առնու այն թագն , և դնէ իւր եղբորորդւոյ գլխին :

Երբոր տեսաւ Յովսէփ՝ թէ Պրինց երբէք լինելոց չէ այնպէս , որպէս ինքն կը յերազմէր , նա մակ գրեց առ Հերակլ արքայն Վրաց , և իմացնելով Պրինցի անակնկալ ծագումն , խորհուրդ տուեց որ թոյլ չտայ նորա անցանել դէպի Հայաստան , գուշակելով՝ որ եթէ Պրինց երթայ հասնի Սիւնեայ աշխարհ , Ղարաբաղի Մեծիքաց հետ միաւորվի , և նոցա հայադուռդ զօրաց գլուխ կանգնի , այնուհետեւ Հերակլի հեղինակութիւնն այն կողմերէն կանհետանայ : Բազմափորձ ծերունին Հերակլ թովեալ ի բանից Յովսէփայ՝ գտաւ դիւրահաւան , և դարանամուտ եղև Կովկասեան լեռանց անձուկ կիրճերի մէջ , և անակնկալ յարձակմամբ Պրինցի հայադուռդ ստիպաւ որ զօրաց վերայ շատ անմեղ արիւն թափեց : Բայց եւրոպական կրթութիւնն յաղթանակեց ասիական զօրութեան վերայ . և

Վանքի հարաւային կողմն վերնայարկ Մատեհադարան , զոր օրինաւոր կարգադրութեան մէջ գրած է Մատթէոս կաթողիկոսն , ուր կը գտվին չորս հաղարէն աւելի հայերէն ձեռագիր մատեանք և զանազան տպագրեալ մատեանք : Մատենադարանի գաւիթին մէջ կախուած են Հայ թագաւորաց պատկերներ , Վաղարշակայ , Արտաշիսի , Մեծն Տիգրանայ , Արամայ , Հայկայ , Արքարու , Տրդատայ , և Բ. Տիգրանայ նկարեալ պատկերներն իւրեանց բուն հանդերձից՝ և թագի ձևերով դրօշին ևս միասին նկարուած են , որք հին ձեռագիր պատմութեանց նկարներէն են գաղափարուած : Այս պատկերաց կարգին կախուած են հանդուցեալ կաթողիկոսաց պատկերներ կարգաւ , Ռուսաց ինքնակալաց և կայսերուհեաց և ժառանգաց պատկերներն . որոց կարգին կան նաեւ կաթողիկոսաց ստացած արքունի հովարտակներն :

(Մնացորդն յաջորդ բնով) :

Կ. Պոլսոյ Լ. Թիւրքի անուն գաղղիարէն լրագրոյն մէջ Հայոց ազգին նպաստաւոր յօդուած մի կընթեռնուիք . զոր իբրեւ քաջալերութիւն սիրով կընդունիմք և ազգային շնորհակալութեան արժանի կը համարիմք :

Ահաւասիկ այս յօդուածն՝ ըստ թարգմանութեան Մասիս լրագրոյն :

« Տէրութեան ժողովրդոց մէջ ամենէն աւելի և համեմատաբար կարճ ժամանակի մէջ կրթական յառաջդիմութիւն ընողն Հայոց ազգն է . թէև հասարակութեան նիւթական վիճակը խիստ անձուկ է , անհատական ջանքերն այդ անձկութեան տեղն ընդարձակապէս լցուցին , և այսօր Հայերն ամեն տեղ գպրոցներ ունենալէ զատ , օրէնսդէսներ , ճարտարապետներ , գրագէտներ , նկարիչներ , դիւանագէտներ , կառավարական գործոց հմուտ անձինք և փորձեալ սեղանաւորներ ունին :

« Մինչդեռ Յոյն ժողովուրդն իւր թէ՛ Գաղաթաւլ տողորեալ , տէրութեան իշխանութեանը դէմ ապստամբութիւններով ինքզինքը կը փճացնէր , և հին ժամանակի հելլենացիներն անմահացնող կրթութիւնը բարձի թողի կընէր , Հայերն՝ աւելի համեստ և աւելի լուրջ բնաւորութեան տէր ըլլալով՝ իրենց ջանքն ուսման և կրթութեան կընուիրէին :

« Այս օրինակը տեսնելով՝ յոյնք հասկցան վերջապէս թէ շատ օգտակար պիտի ըլլար իրենց

Պրինց Գառնիկոսի նման հասոյց իւր զօրաց մնացորդն մինչև Էջմիածին , անցանելով ընդ լեռինս Կովկասու և Վրաստանի :

Շատ էր այս՝ Ներսէս վարդապետին . որ Ղուկաս կաթողիկոսի բերնէն կոնդակ գրեց առ Հերակլ և պարզհասկացուց նորան իւր մեծ սխալանքն . նախ՝ որ նա ի զուր և տարապարտուց Հայոց դէմ սուր հանեց , մինչ նորա նախնին փառնաւաղ արքայն էր քանի ամօք յառաջ Դաւիթ բէգին տուել իշխանութիւն՝ Հայաստանն փրկելոյ : Երկրորդ՝ որ նա խեղամուտ չեղաւ՝ որ Յովսէփ իւր աղգականաց Արղւութեանց համար է այն տեղն ապահովում : Երրորդ՝ որ լաւ էր թէ Պրինցն տիրէր Հայաստանին , քան թէ Արղւութեանք , որ Յովսէփայ զօրութեամբ կարող են ժամանակաւ մեծ աղգեցութիւն ունենալ Տփլիսի վիճակի վերայ :

Ղուկաս կաթողիկոսի այս կշտամբանքն մեծ տպաւորութիւն արաւ Հերակլի վերայ . Հերակլ բացեց աչքն և յայտնի տեսաւ՝ որ Յովսէփ բարեկամ չէ իւր թագաւորութեան ի սրտէ : Վասնորոյ երբ սկսաւ աղա Մահմադ խանի արշաւանի սպառնալիքն որոտալ , Հերակլ ոչ ի ձեռն Յովսէփայ , այլ ուղղակի խնդրեց տէրութեան օգնութիւն , միայն հարեանցի Յովսէփի ընչացքն քերելով՝ վասնորոյ և օգնութեան յամեն Յովսէփայ աղգեցութեան գրուեցաւ , գուցէ թէ նա խաղառ անմեղէր , և Տփլիս յաւերակ եղաւ :

ԾԵՐՈՒՆԻ ԳԱՐԻԻԷԼ ՊԱՏԻԱՆԵԱՆ
(Շարունակեցի) :

Հին պատեր յոյսերը մէկդի թողուլ և իրենց վտանգներէն անհաշտ և հանձարին նոր ուղղութիւն մը տալ: Ասկէջ յառաջ եկան այն անթիւ խօսարարներն ու ընթերցարարներն որք երկու երեք տարիէ ի վեր կը բաղմանան Յունաց մէջ՝:

Մասին Մարտի 22 թիւէն հաճութեամբ սրտի կը քաղեմք հետեւեալ եղբայրսիրական ազգագուտ այցելութեան լուրը:

«Ինչպէս որ հինգշաբթի առուր թուով ծանուցած էինք, կաթողիկէ Հայոց Պատրիարք գերապայծառ Տ. Յոհան փիւրէշեան արքեպիսկոպոսը՝ նոյն օրը ժամը 6ին Գումգափուի Հայոց պատրիարքարանն իկաւ յայցելութիւն մեր ամենա Ս. Պատրիարք Հօր, իւր հետ ունենալով իւր փոխանորդ գերա. Գրիգոր վարդապետ Էնֆիլէճեան, գերա. Մովսէս եպիսկոպոս Ամպերպոյեան և Ստեփաննոս վարդապետ Եղբայրսիրական: Ս. Պատրիարք Հայոց արժանաւայել պատուով ընդունեց զգերապայծառ փիւրէշեան և նորա բարձրաստիճան ուղեկիցքը, որք երկու ժամու մօտ նստելով՝ սիրալիր համակրութեամբ տեսակցեցան Ս. Պատրիարք Հօր հետ, և ազգային ու կրօնա. խնդրոց վրայ խօսքեր ըրին»:

Կ. Պօլսոյ ազգային թերթերն ախուր լուր մի կը գումարեն մեզ: Հայոց ազգին ամենասիրելի Պատրիարք՝ ամենա. տէր Ներսէս սրբազանին մայրն որ բարեպաշտ և բարեխիտ աղիկն մէն էր, ու երկար ժամանակէ հետէ անկողնոյ կը ծառայէր, Մարտի 28ին առ Աստուած փոխեր է ի հասակի 57 ամաց:

Հանգուցելոյն յուղարկաւորութեան հանդէսն ի հետեւեալ առուրն արժանաւոր փառաւորութեամբ կատարուեր է ի խաղիւղն Կ. Պօլսոյ, Այս սգալի առթիւ Արշալայն իբրեւ հաւատարիմ թարգման քաղաքիս Հայոց զգացմանց, իւր միտքարական խոնարհ յարգանքը կը նստուցանէ Նորին բարձր Սրբազնութեան ի կողմանէ Հայ ժողովրդեան Զմիւռնոյ:

Մոսկուայի ՓԱՐՈՍ պարբերականին չորրորդ տետրակին մէջ հետեւեալ յայտարարութիւնը կը թեւեռուէ:

«Գտանի ընդ մամուլ Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչև ցեղականն էր Բ. ամբ Տեառն 1763—1831:

Գրեալ ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց Զմիւռնացոյ:

Ի Մոսկուա, տպագրութիւն Զարմ. Մսերեանց:

ՔԱՆԱՔԱՆ ԷՆԻՔԷՔ

Զմիւռնիա, 5 Ապրիլ:

Գարնանային եղանակն սկսաւ գրեթէ մէկ երկու շաբաթէ ի վեր և յոյժ գեղեցիկ ու զըւարճալի օրեր կընէ:

—Մեր քաղաքապետական խորհուրդը (պէլէտիէ) բարենախանձ ջանքը կաշխատի հարկաւոր եղած օգտակար տնօրէնութիւններն ի գործ դնելու: Նորա խնամքն հացին գինն արդէն նուազեցաւ քիչ մը և կը լսեմք թէ մինն գինն ալ նուազեցնելու հոգ կը տարուի:

—Ատանայի նոր կուսակալ Սաֆֆէթ փաշան, նմանապէս Հալէպի նոր կուսակալ Լատա Մուսլիս փաշան, երկուշաբթի առաւօտուն Ռուսաց շոգենաւով Կ. Պօլսէն եկան ու երեկոյն շարունակեցին ուղեւորութիւնն իրենց փոխադարձ պաշտօններուն երթալու:

—Սպանիոյ նոր գեսպանն ի Կ. Պօլսէ՝ Գոնթէ սեպուհն այս շաբթու հասաւ ի մայրաքաղաքն:

—Պէրլինի Բօլի կոչուած օրագիրն կընէ թէ Գաղղիան իւր զինուորական պատրաստութեան բնականական պատերազմ մի կը պատրաստէ ընդդէմ Գերմանիայ՝ իրեն գաշնակից ունենալով Աւստրոհունգարիան և Իտալիան:

Այս լուրն թէ և ի սկզբան տխուր տպաւորութիւն մի ըրաւ հասարակութեան վերայ, բայց յետոյ նորա անհիմն լինելն իմացուելով՝ միտքերն շուտով հանդարտեցան:

—Ինչպիսիքի զիշերն քաղաքիս իւշեղազգը թաղը գտնուած էօքիւլաք անուն գեղարանը հոյ ճարակ եղաւ: Այս հրդեհին պատճառը յայտնի չէ. խանութը քարաշէն լինելով և կրակը մէջէն ելլելով, գեղերն միայն այրեցան:

—Կըլսեմք թէ Կ. Պօլսոյ Հայտար փաշայի երկաթուղւոյն գործակալաց ամսականներուն վերայ հարկերն 25 յաւելուած եղեր է:

—Մանչէսթըր Էֆէսթ օրագրոյն Մարտի 26 թիւէն կիմանամք թէ հռչակաւոր Այվազովքի դաշտանկար պատկերհանն Ագապեան վարժարանին նուիրելու խոստացած երկու պատկերներէն մէկ հատը արդէն յուղարկեր է իւր սովորական ազգասիրութեամբ:

—Կ. Պօլսոյ Փաշապետական օրագրէն հետեւեալ ազգային լուրերն կը քաղեմք:

«Մանչէսթըրի հոգեւոր տեսուչ ֆրիդայէմեան գերա. տէր Ղեօնդ վարդապետն՝ Անգղիոյ մէջ Ասորոց կաթողիկոսին բռնած շահամուլ ընթացքը տեղեկագրեր և Սթեֆան անուն անգլիական թերթին մէջ յօդուածը ներփակեալ ղրկեր է ի Պատրիարքարան»:

«Մշոյ վանահայր գերա. տէր Մամբրէ Ս. Սրբեպիսկոպոսն Պատրիարքարան հեռագրեր է գերա. Միսիթար վարդապետի Մշոյ վիճակին Առաջնորդ ընտրուած, և Բիլի Եփրեմ վարդապետին սպանուած ըլլալը»:

«Ամասիոյ և Մարզուանու Առաջնորդ գերա. եղեսեան սրբազանն որ Պալքէսէր կը գտնուէր, քանի մը օրէն մայրաքաղաք կը գառնայ»:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամազակն ի հանդարտութեան գտնի և միայն 600 հակ վաճառեցաւ յայտ՝ Եօթնէկի ի գին 375 ղուրուշի չըբըբը և 327—338 ի Ատանայի բամբակը:

Աֆիօնը նմանապէս ի հանդարտութեան դըստնի և այս շաբթու նոր վաճառում չեղև:

Փալամուտը դիւրավաճառ է միշտ: Այս շաբթու 2600 կենդինարի չափ նաթիւրէլ ըսուած տեսակէն վաճառեցաւ 170—175 ղուրուշի կենդինարն: Մեր շուկային մէջ պատրաստ դըստնուած վալամուտը՝ 8000 կենդինարի չափ է:

Ուխտի բուրդէն 350 կենդինար Գառահիւսարի ապրանք վաճառեցաւ 370 ղուրուշի կենդինարը:

Ճէհրին հանդարտ է և նոր վաճառում չեղև:

ԾԱՆՈԹՅՈՒՆ

ԵՏՐՊԻ

Յայտնութիւնը ծածկելոյ, կամ պատմութիւն լուրերն գիտութեանց՝ որ ի նախնի ժամանակաց հետէ:

Մուշլան, նրապարտական և քղական արուեստը, գաղտնիք, խորհուրդը, նախնի մեհենից մէջ կիլիքաւ պատրուակաւ հնարք, կոչումն ոգոյ, երէմուր, սրբազան և ժողովրդական ուրուստեպիք, մերեմագիտութիւն, հարուստ, կախարդութիւն, գիշերածողով վիկաց, վիտիք, դիւստիք, այսանքութիւնք, դիւսպիւմուր, մագիստականութիւն, երկրորդականութիւն եւայլն:

Թարգմանեաց ի գաղղիարեհն ի մարութ աշխարհաբար լեզու, յարգոյ Ն. Ճիվանեան գրագետն:

Կ. Պօլս, տպագրութիւն Յ. Պալմանեան:

1874

Քարտալ 650 երես բաղկացեալ հետաքրքրական աշխատասիրութիւն մըն է, որոյ բազմամուտ գաղղիացի հեղինակն մօսի. Ա. Տըպէ ճիշտ ու մանրամասն բացատրութիւններ կուտայ բազում գիտութեանց ծագմանն ու վիճակին վրայօք. որով ուղաղիք ընթերցողն, գաղղիար մի կուսենայ քի ինչ էին քաղուն գիտութիւնք ըսուածն՝ տգիտութեան և բարբառութեան զարուց մէջ, և ինչ նպատակաց համար կը գործածուին:

Կըվաճառի ի Կ. Պօլս, յարգոյ Յ. Մարգարեանի գրալուծանութեան խանութն ի գին 1 1/2 արծաթ Մեհիտի:

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈԹՅՈՒՆ

Սօսի Գրիկոս:

Թափած մագերէ խիստ քիչ ժամանակի մէջ կատարեալապէս, և ախորժիկ զոյնով մը բերելու, և մագերէուն մէջ գտնուած անմաքրութիւններն ու քիփերը փոխարին անհետացնելու համար ամենաօգտակար ջուր մըն է, որ կը գտնուի Բէշուրմալքար պաշին փերուքեր պարոն Սարգսին քով: Արդիւ գործածող շատ յաջախորդներ այս ջուրին գարմանալի օգուտը տեսնելով՝ խիստ գոհ եղած են յիշեալ պարոն Սարգսի փորձառու գործողութիւնէն:

ՀԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ



ԳԵՂԱՆԱՏԻ ՀՈՂՈՅԻՆ ԶՂԱՅԻՆ ՀԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Մարդոց զբոսն դուրսէն (Էփէսթ) շատ յոյժմը ըլլալ տոսկալի ախտ մըն է և ինչեւոր ամենափոքրիկ շարժումը կամ զբոսութիւնը վնասել է յոյժ. վասն զի ուր գտնուէ անոր դէպքը: Միակ դեղը այս է. քիչ խմել զինքն, և ոգիւ կից ըմպել: և աւելի աղէկ կըլլայ որ բոլորովին հեռանա անոցմէ, և ամենին չմտն. նմանապէս խաչվէ մի խմել, և անտեղ թիթեմ թէյով (չոյ) գոհ եղի: Կարելի եղածին չափ մաքուր օդ ծծէ ամեն գիշեր իմ գեղահատեղէն երեք կամ չորս հատ կըլլէ, շատ միս կեր և համեմունքէ (սոլա) հեռու կեցի: Եթէ այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ ի գործ դնելու ըլլաւ, միտքը շուտով ախտի համազտանայ, մարմնի առողջ պիտի ըլլայ և պիտի մնանա թէ զգաց շարժումն ունեցար:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԻԿԱՄԱՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ թէ կըլլանք չափէն աւելի ջրակը կըլլաւ կամ բաւական չէն ըլլաւ, թէ բարձր կամ աւագ երկկամանց կը հասնին կամ թէ անոց մէջցաւ կը գոյանան մէջքին համապատասխանած մասը: Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հոլլուէի դեղահատութիւնը տուալ հրահանաց համաժողով անոր սպեղանիով ընդ փեղ երկկամանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը: Այս գործարան անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնքան ուրիշ գեղեցիկ դեղ տեղ գործածուած պիտի ըլլան:

ՍՏԱՄՈՒՍԻ ԱՌՈՒՆԵԼ

ՈՐ և է դեղ մի չկրնար ստամոքի գործութիւնը նորոգել և աղէկեմը զայն շուտով՝ ինչպէս այս դեղահատութիւնը, որոնք անբարխանութեան կամ վնասութեան կերակուր պատճառուած բոլոր թիթեմութիւնը կըլլան և կը հասնին ի Լեարդն (Էփէսթ) և բոլոր գործողութիւնը կը կարգադրեն: Գիշերու աստիկ ձգտան (Էփէսթ) դեղերու մէջ սրանչէր ներգործութիւն մի ունի և լեթի ու ստամոքի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ:

ԲՈՐՈՒԹԻՒՆ ԹՈՒԳԱՌԱՆԻՑ (ԳԵՒԵՐ) ՀԱՅ ԵՒ ՀԱՐՈՒՆԵԼ

Հիւանդութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւնը ամեն ախտէն աւելի յոյժմը կը պատճառէ երբեմն աւելի վնասագաւոր է: Անոց գործողութեան անկարգ ընթացքին առաջինը շանները կընան միշտ կարգադրուել Հոլլուէի հոլալուոր գեղահատից միջոցաւ: Անոց շուտով կը գործանեն արեան ուր և է առաջնակեց անշարժութիւնը և կըլլան ինչոք անոց շանները: և կը բարեխանեն շիւտութեան ստատիկ արագութիւնը և կը գործողութիւն կուտան շիւտութիւն ու թորեւորն դիւրութեամբ ու կը նմանապէս գործելու: Այս դեղահատութիւնը իրենց մարդկան զօրութեամբ կը սրեն արեան ամեն աղտոցութիւններն, և այս եղանակաւ կը զօրացնեն զգործութիւնը (Էփէսթ) ընդդէմ ծիւրակաւ ախտի, շիւտութեան և ուրիշ թորային տկարութեանց:

ՏԿԱՐԱՅԵԱԼ ՄԱՐԴԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Տկարութեան, թուրութեան և զգացաւթեան դեղերու մէջ, որոնք ուր և է ընտան կամ գերմանական չափազանցութեան յառաջ եկած են, այս դեղահատից այլուլը և նորոգել ներգործութիւնը մեծապէս օգտակար է. քանզի մարդոց թիւն կըլլան հոլալուոր ստատիկ, մարմնայն ամեն հիւանդութեան կը կանխուորէ, զայն դիւրութիւնը կը զօրացնէ, հիւանդին միտքը կը յարգարէ և վերջապէս առողջութիւնը ձեռք կը բերէ:

Հոլլուէի դեղահատերը ամեն օգտակար դեղերն են հիւանդութեան հիւանդութեանց համար:

Հիւանդութեան,	Յօղացուութիւն,	Թորացուութիւն,
Շիւտութեան,	Տեղափոխութիւն,	Ցաւը որովայնի,
Խիթ (սոլա),	Զրգողութիւն,	Միզարգելութիւն,
Հարբուլ,	Նմանապէս,	Բարբառում,
Ծիւրակաւ ախտ,	Գաղղիան,	Ախտը ընդերաց,
Թանջ (Էփէսթ),	Բարբառումն արտի,	Անկանխութիւնը կախալ,
Խոլա պարանոցի,	Քար կամ խիճ միջու,	Նանց,
Վերստութիւն,	Նոցի,	Մորթային հիւանդութիւն,
Լեթի հիւանդութիւնը,	Վիտալութիւն,	Թիւնը,
Փողացաւ,	Ախորժիկեան ախտ,	Խոցողութիւնը,

Կիտեալ արժան է որ ապեալ հրահաններ կան ամեն լեղով որոյ մէջ հատ կը գտնուի իւրաքանչիւր տուիւն մէջ ի տեղեկութիւն հիւանդաց, ամեն պարագայից մէջ:

Այս դեղահատերը, որ կըլինուին Հոլլուէի բժշկին անձնական վերահսկողութեամբ, կըլլան և իւր գործարանը ի Լուտոն, Օքսֆորդ կոչուած փողոցը թիւ 533, ի գին 1 և 1/2 շէլ շէլի, 2 3/4 և 1/2 շէլի տուիւն, ըստ մեծութեան տոյց:

Խմրագիր—տէր Լրագրոյս,

Գ. Լուս. Գ. Պալաւալեան:

Ի ՏԿԱՐԱՅԵԱԼ ԱՐՇԱԼՈՒՍՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ